ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 25

«10» 04 2018թ. գ. Երևան

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի գործունեությունը հստակեցնելու և կանոնակարգելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 22-րդ հոդվածով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018թ. ապրիլի 10-ի
N 25 հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի (այսուհետ՝ կոլեգիա) գործունեության կարգը:

2. Կոլեգիան խորհրդակցական մարմին է, որի որոշումները կենսագործվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի (այսուհետ՝ գլխավոր դատախազ) հրամաններով:

3. Կոլեգիան իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

4. Կոլեգիան կազմված է գլխավոր դատախազից, գլխավոր դատախազի տեղակալներից, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներից և Երևան քաղաքի դատախազից:

5. Կոլեգիայի հիմնական նպատակն է քննարկել դատախազության գործունեության կազմակերպման հիմնարար հարցեր և որոշել դատախազության սահմանադրական լիազորությունների իրականացման ուղղությունները:

6. Կոլեգիայի նիստերում քննարկվում են դատախազական գործունեության կազմակերպման հիմնարար հարցեր, դատախազական գործունեության ոլորտներին վերաբերող խնդիրներ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների (այսուհետ՝ կառուցվածքային ստորաբաժանումներ) և դատախազության կազմում գտնվող դատախազությունների (այսուհետ՝ դատախազություններ), դատախազների հաշվետվությունները, ինչպես նաև դատախազության լիազորությունների իրականացման ուղղությունները, որոնց տրվում են համապատասխան գնահատականներ:

7. Եթե գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուն զբաղեցնում է դատախազի պաշտոն, ապա գլխավոր դատախազը, նրան, առանց մրցույթի անցկացման գլխավոր դատախազի տեղակալ նշանակելուց առաջ խորհրդակցում է կոլեգիայի հետ:

8. Օրինականության ամրապնդման և հանցավորության դեմ պայքարի առավել հրատապ խնդիրների շուրջ այլ մարմինների հետ կարող են անցկացվել կոլեգիայի համատեղ նիստեր, որոնց արդյունքում կարող են ընդունվել համատեղ որոշումներ:

II. Կոլեգիայի աշխատանքների կազմակերպումը

9. Կոլեգիայի աշխատանքները կազմակերպում են նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են, ըստ անհրաժեշտության, գլխավոր դատախազի կողմից:

10. Կոլեգիայի նիստերը անցկացվում են գլխավոր դատախազությունում: Անհրաժեշտության դեպքում գլխավոր դատախազի որոշմամբ կարող են անցկացվել արտագնա նիստեր:

11. Կոլեգիայի նիստերին առանց ձայնի իրավունքի կարող են մասնակցել գլխավոր դատախազի կողմից հրավիրված այլ դատախազներ, ինչպես նաև՝ պետական այլ մարմինների և գերատեսչությունների ներկայացուցիչներ:

12. Կոլեգիայի քննարկմանը ներկայացվող նյութերը և կոլեգիայի որոշման նախագծերը (այսուհետ՝ նախագիծ) գլխավոր դատախազի կամ նրա տեղակալների հանձնարարությամբ մշակում են կառուցվածքային ստորաբաժանումները և/կամ դատախազությունները (այսուհետ՝ նախագիծը մշակող), որոնք պատասխանատվություն են կրում դրանք ժամանակին և պատշաճ նախապատրաստելու համար:

13. Որոշումների նախագծերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ինչպես նաև գլխավոր դատախազի՝ ավելի վաղ ընդունած իրավական ակտերին, եթե նախապատրաստվող նախագիծը չի նախատեսում դրանց փոփոխումը կամ ուժը կորցրած ճանաչելը: Դրանում պետք է նշվեն կատարման համար պատասխանատու անձիք, իսկ անհրաժեշտության դեպքում սահմանվեն նաև կատարման ժամկետներ:

14. Նախագիծը մշակողը, այն շահագրգիռ կառուցվածքային ստորաբաժանումների հետ համաձայնեցնելուց հետո, ներկայացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն (այսուհետ՝ վարչություն)՝ կոլեգիայի նյութերին կցելու համար:

15. Նախապատրաստված նյութերը վարչություն են ներկայացվում քննարկումից առնվազն 10 օր, իսկ որոշման նախագիծը՝ 5 օր առաջ:

16. Սույն կարգով նախատեսված պահանջներին չհամապատասխանող նախագծերը վարչության կողմից վերադարձվում են նախագիծը կազմողին՝ 2-օրյա ժամկետում դրանք լրամշակելու և պատշաճ ձևակերպելու համար:

III. Կոլեգիայի նիստի նախապատրաստումը

16. Գլխավոր դատախազի հանձնարարությամբ վարչությունն ուսումնասիրում է կոլեգիայի քննարկմանը ներկայացված նյութերի լիարժեքության վիճակը: Վարչության պետն այդ մասին զեկուցում է գլխավոր դատախազին՝ հաստատման ներկայացնում կոլեգիայի օրակարգը և նիստին հրավիրվող անձանց ցուցակը:

17. Վարչությունը կոլեգիայի նյութերը կոլեգիայի նախագահին և անդամներին է հանձնում կոլեգիայի նիստից առնվազն 3 օր առաջ, իսկ կոլեգիայի նիստի մյուս մանակիցները կոլեգիայի նիստի օրվա, ժամի, վայրի, ինչպես նաև օրակարգի հարցերի մասին իրազեկվում են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով՝ վարչության կողմից կոլեգիայի նիստից առնվազն 3 օր առաջ:

18. Հրավիրվածների մասնակցությունը կոլեգիայի նիստին ապահովում է վարչությունը՝ նախապես ցուցակը համաձայնեցնելով գլխավոր դատախազի հետ, որոնց առնվազն 3 օր առաջ ուղարկվու է կոլեգիայի օրակարգը, անհրաժեշտության դեպքում նաև այլ նյութեր:

19. Կոլեգիայի նախապատրաստման և անցկացման հետ կապված հսկիչ-անցագրային ռեժիմի ապահովման հարցերը լուծում է Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչությունը:

20. Կոլեգիայի օրակարգը հաստատվելուց հետո գլխավոր դատախազի՝ զանգվածային լրատվության միջոցների հետ համագործակցության հարցերով խորհրդականը (այսուհետ՝ մամուլի քարտուղար) գլխավոր դատախազին առաջարկություն է ներկայացնում զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին նիստին հրավիրելու հնարավորության և նրանց տրամադրվելիք տեղեկատվության ծավալի մասին: Հրավիրված զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների ցուցակը ոչ ուշ, քան կոլեգիայի նիստից մեկ օր առաջ հսկիչ-անցագրային ծառայությանն է հանձնում մամուլի քարտուղարը, իսկ կոլեգիայի նիստին հրավիրված մնացած անձանց ցուցակը՝ վարչության պետը:

IV. Կոլեգիայի նիստի աշխատակարգը

21. Կոլեգիայի աշխատանքն իրականացվում է հրապարակայնորեն, այնքանով, որքանով դա չի հակասում գաղտնիության ռեժիմի պահպանմանը:

22. Կոլեգիայի նիստի տևողությունը 4 ժամից ավելի լինել չի կարող: Զեկուցման համար սահմանվում է մինչև 20, ելույթների համար՝ 5-ական րոպե:

23. Կոլեգիայի նիստերն արձանագրվում են, կարող է կիրառվել ձայնագրություն և/կամ սղագրություն:

24. Կոլեգիան իրավասու է որոշումներ ընդունել, եթե նիստին ներկա է կոլեգիայի անդամների կեսից ավելին: Կոլեգիայի նիստի կոլեգիայի անդամը, ինչպես նաև մասնակիցը կարող է բացակայել գլխավոր դատախազի գիտությամբ և թույլտվությամբ:

25. Կոլեգիայի նիստը վարում է գլխավոր դատախազը կամ նրա համաձայնությամբ՝ գլխավոր դատախազի տեղակալներից մեկը: Կոլեգիայի նիստերը կարող են լինել փակ և բաց, որի մասին որոշում է կայացնում կոլեգիայի նախագահը: Փակ նիստի մասնակիցների ցանկը որոշում է կոլեգիայի նախագահը:

26. Կոլեգիայի նիստում հարցերը քննարկվում են օրակարգում սահմանված հերթականությամբ, եթե այլ հերթականություն չի սահմանվել կոլեգիայի կողմից:

27. Կոլեգիայում քննարկումը սկսվում է օրակարգի հարցի զեկուցումով: Ապա՝ կոլեգիայի նախագահի, անդամների կողմից զեկուցողին տրվում են հարցեր, որից հետո կոլեգիան անցնում է մտքերի փոխանակությանը: Մտքերի փոխանակությանը մասնակցում են կոլեգիայի անդամները, ինչպես նաև մասնակիցները: Կոլեգիայի օրակարգի հարցի շուրջ քննարկումն ամփոփում է կոլեգիայի նախագահը, որից հետո առաջարկություններ են արվում կոլեգիայի որոշման նախագծի կապակցությամբ:

28. Կոլեգիայի որոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը համարվում է չընդունված:

29. Վարչությունը նախապատրաստած կոլեգիայի նիստի արձանագրության նախագիծը համաձայնեցնում է դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների հետ, որից հետո նոր ներկայացնում գլխավոր դատախազին:

V. Կոլեգիայի որոշումների կատարումն ու վերահսկումը

30. Կոլեգիայի որոշումներին համապատասխան նախապատրաստված հրամանները գլխավոր դատախազի կողմից ստորագրվելուց հետո, ուղարկվում են Հայաստանի Հանրապետության դատախազության կառուցվածքային ստորաբաժանումներին և դատախազություններին ու պահվում վարչությունում:

31. Հաշվառումից հետո վարչության կողմից հրամանների էլեկտրոնային տարբերակներն ուղարկվում են մամուլի քարտուղարին՝ համակարգչային բանկում տեղադրելու համար:

32. Կոլեգիայի որոշումների արդյունքում տրված հանձնարարությունները կատարելուց հետո հանձնարարություն ստացած կառուցվածքային ստորաբաժանման և/կամ դատախազության ղեկավարը կատարումը հավաստող փաստաթղթերը մեկական օրինակ ուղարկում է վարչություն՝ կելոգիայի նյութերին կցելու և կետը կատարումից և վերահսկողությունից հանելու նպատակով:

33. ՀՀ դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների պետերը և դատախազությունների ղեկավարները կոլեգիայի որոշումները պարտադիր կարգով քննարկում են օպերատիվ խորհրդակցություններում, դատախազներին ծանոթացնում կոլեգիայի որոշման բովանդակությանը և նրա իրացման նպատակով հրապարակված մյուս փաստաթղթերին, դրանց կատարման նպատակով ձեռնարկում միջոցառումներ, որոշում պատասխանատու կատարողներին և կատարման ժամանակը, կազմակերպում կատարման վերահսկողությունը և արձանագրության պատճենն ուղարկում վարչություն: